մար. ոմանց էլ զգայնութեան դպչելու համար՝ ինչպէս դաշնամուրի մօտից անցնելուց պատահարար ձեռքդ ստեղնաշարի վրայ ես դնում եւ անսպասելի ձայներին ունկնդիր դառնում:

Աղջիկները գրեթէ միշտ խարուսիկ են: Գաղտնիք չունին: Միշտ մարմնի նոյն բովանդակութեամբ են ապրում:

Ամէն ինչ վաղուց բացայայտ է, բնականօրէն նախատեսուած, ուստի մելամաղձոտ եւ յուսահատ:

Կանանց վէպը վաղուց գրուած է մեր հոգիների եւ մեր մարմինների մէջ: Նրանց ճակատագիրը սահմանափակ է եւ դաժան, նրանց դերը՝ ստորին:

Սակայն, ի՜նչ սիրելի է լսել նրանց էութեան մեղմ խարշաքումը եւ յոյզերի հեռաւոր սարսուռը: Ոմանք, նոր ծլած նշենու ճիւղի նման, լիալուսինի ոսկէ գերեզման են փնտռում, ոմանք էլ, ափերի մօտ ծփող ջուրերի պէս, իրենց կամքն են փորձում...

Այսպէս է նաեւ, յոյն բարեկամուհիս, Նաթալին:

Նաթալին բարձր է, բարեկազմ, գրեթէ դասական մարմնով: Լայն բացուած, արքայիք Աստղիկի, սեւ աչքեր, կանոնաւոր քիթ, ճըղմած կեռասի մէջ թաթախուած շրթունքներ եւ Կալամաթայի ձիթապտուղի խաւարագոյն վարսեր:

Նրա մարմնի մէջ ծովի բուրում կայ՝ սուր եւ շլացուցիչ: Կարծես, կղզիների մեծ կոհակների ցեղիցն է, եւ նայուածքի մէջ կանանչ կայծեր են բռնկում:

Ամբողջովին հարց է. ծարաւ է՝ անապատը ընկած տրիտոնի նման: Զսպուած, վերին աստիճանի ժուժկալ իր անձը բաշխելու մէջ: Իր առած, անգլո-սաքսոն կրթութիւնն էլ նպաստում է աթէնական արձանի այս կեցուածքին:

Եթէ Նաթալին ապրէր եւրոպական որեւէ մեծ քաղաքում, նա կը լինէր «ճակատագրական կին»:

Հռոմի սալոններում ներկայացող սպանհուների նման, նա կը պտտցնէր իր աստուածային դժգոհութիւնը, սեւաթոյր վերարկուի տակ կը զսպէր իր մարմնի մարմարէ հրաբուխը եւ կը հրճուէր իր լքած երիտասարդների ինքնասպանութեամբ:

Այստեղ, միջակ այս միջավայրում, Նաթալին բնազդաբար զսպում է իր կարելիութիւնները, ամփոփում իր տենդը, սպասում անխուսափելի օրին:

Սիրում եմ ականջ դնել նրա մէջ արթնցող փոթորիկներին: Նրա մարմինը ալեկոծուած ծովի վրայ տատանուող նաւի է նմանում, ոգին՝ բռնկած թուփի, նայուածքը՝ անտառում յանկարծակի երեւցած վագրի կայծկլտումին:

Գալիս նստում է աշխատանքիս սեղանի առջեւ: Ոտքը ոտքի վրայ նետած, կուրծքը չիտակ, ձեռքերը սեղմած ծունկի վրայ, գրեթէ անշարժ:

Հարցերիս, աննշան պատասխաններ է տալիս:

Երկար լռութիւններով է խօսում:

Երբեմն, փրցնում է վարդի մի փերթ եւ շրթունքների տակ սեղմում: Անուշ դինովութիւն եմ զգում: Զայնս քիչ դողում է:

Նաթալին, անմիջապէս, աչքերը վայր է դցում, մի վայրկեան մնում է, ու խոր ժպիտով թափանցում է հոգիս:

Քիչ յետոյ, գնում է:

Նաթալին մի մեծ վէպ է փնտռում:

Մի ողբերգութիւն:

* * *

Անատոլին կրակ ու բոցի մէջ է: Եւրոպան ուժասպառ, անկման նախօրեակին է:

Որբեր, գաղթականներ: Զարհուրելի խեղճութիւն կուտակուած Վոսֆորի ափերին: Փողոցներում՝ կտոր-կտոր մարդիկ, սարսափը իրենց աչքերում:

Հայաստանից անորոշ լուրեր են գալիս: Ոչինչ չեմ հասկանում:

Երեկոյեան ուշ վերադարձայ: Թրքերը տարօրինակ կերպով են նայում: Բարձրաձայն չեն խօսում, խմբով չեն գնում:

Աւերակների մօտ կանգն առի: Խաւար: Երկինքը սեւ են ներկել, ոչ մի աստղ: Տարօրինակ նախազգացումներ ունեմ: Օդի մէջ անհանգիստ մի բան կայ, հոգիներն էլ մութ են:

Հեռուից մի ոտնաձայն: Նա եւս կանգ առաւ եւ ետ վերադարձաւ: Ինձանից վախեց:

Այս գիշեր նոր տան տէրն էլ չի երգում: Լուսաւորուած է միայն մի սենեակը: Փողոցը կարծես երկնքի մի անկիւնում կուչ է եկել: Ես էլ կուչ եմ եկել համայնատարած այս խաւարում: Մէջս մի բան է սառել, բազուկներիս

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան